



Գրականություն
Արվեստ
Մշակույթ

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՅՈԳԵՎԱՐՔԸ

ԵՎ
ՂՄԻՆՏԻՍՄԻ
ԵՎ ԴԳԻՍՂԺԳՍԵ



Երևան
«Անտարես»

ՀՏԴ 821.134.2-3 Ունամունո
ԳՄԴ 84(4Իսպ)-4
Ու 520

Թարգմանությունը իսպաներենից՝
ՌՌԻԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

Ունամունո դե Միգել
Ու 520 Քրիստոնեության հոգեվարքը և խրատական երեք
նովել: Միգել դե Ունամունո: Իսպ. թարգմ.՝ Ռ. Պետ-
րոսյան.- Եր.: Անտարես, 2016.- 304 էջ:

Միգել դե Ունամունոն իր «Քրիստոնեության հոգեվարքը»
կրոնափիլիսոփայական էսսեն գրել է 1924 թ. Փարիզում,
երբ քաղաքական անհնազանդության պատճառով նրան
հերթական անգամ արտաքսում են Իսպանիայից: Առաջին
անգամ էսսեն լույս է ընծայվել ֆրանսերենով, իսկ ահա
իսպաներեն տարբերակը լույս է տեսել միայն 1930 թ.
փետրվարին:

«Խրատական երեք նովել և մեկ նախաբան»-ը լույս է
տեսել 1920 թ.: Այստեղ Ունամունոն նիվոլային պատումի
միջոցով վերլուծում է գրողի և իր ստեղծած հերոսների
միջև կապը, բացահայտում հերոսների ապրումները՝
նրանց ներկայացնելով ռացիոնալ մտածողության սահ-
մանից այն կողմ:

ISBN 978-9939-51-899-2



© Պետրոսյան Ռ., 2016
© Անտարես, 2016

**Քրիստոնեության հոգեվարքը
և խրատական երեք նովել**

Քրիստոնեության հոգեվարքը և խրատական երեք նովել

(Թարգմանչի նախաբանը)

«Քրիստոնեության հոգեվարքը» էսսեն լի է ավետարանական մեջբերումներով: Ըստ Ունամունոյի՝ վերջինս կարող է համարվել կրոնական թեմայով գրված իր ամենամեծ ստեղծագործությունը, որի հիմքում հոգեվարքն է, ավելի ճիշտ՝ պայքարը: Այսպիսով՝ հոգեվարքը պայքար է: Եվ Քրիստոս եկավ՝ մեզ հոգեվարք, պայքար, բայց ոչ խաղաղություն բերելու: Նա անձամբ դա ասաց. «Մի՛ կարծեք, թե ես եկել եմ երկրի վրա խաղաղություն բերելու. ո՛չ, ես խաղաղություն չեմ բերել, այլ սուր եմ բերել: Եկել եմ բաժանելու որդուն հորից, դստերը՝ մորից, հարսին՝ սկեսուրից, որովհետև մարդուս թշնամին իր սեփական տնից է լինում» (Ավետարան ըստ Մատթեոսի, X, 34-37): Քրիստոս նորից ասաց. «Ես կրակ եմ բերել երկիր, և որքա՛ն կցանկանայի, որ այդ կրակը հրդեհ դառնար: Դուք կարծում եք, թե ես եկել եմ երկրի վրա խաղաղություն բերելու. ո՛չ, ասում եմ ձեզ, եկել եմ բաժանելու, այսուհետ նույն տան մեջ հինգը բաժան կլինեն. երեքը դուրս կգան երկուսի դեմ, երկուսը՝ երեքի, հայրը որդու դեմ դուրս կգա, որդին՝ հոր, դուստրը՝ մոր, մայրը՝ դստեր, սկեսուրը՝ հարսի, հարսը՝ սկեսրոջ» (Ավետարան ըստ Ղուկասի, XII, 49-54):

Միգել դե Ունամունոն իր «Քրիստոնեության հոգեվարքը» կրոնափիլիսոփայական էսսեն գրել է 1924 թ. Փարիզում, երբ քաղաքական անհնազանդության պատճառով նրան հերթական անգամ արտաքսում են

Իսպանիայից: Առաջին անգամ էսսեն լույս է ընծայվել ֆրանսերենով, իսկ ահա իսպաներեն տարբերակը լույս է տեսել միայն 1930 թ. փետրվարին. ինչպես փաստում է հեղինակը, գրքում փորձում է վերարտադրել իր մեկ այլ՝ «Մարդկանց և ժողովուրդների՝ կյանքի հանդեպ ողբերգական զգացումը» փիլիսոփայական էսսեի գաղափարական հարցադրումները, սակայն առավել հակիրճ և ամփոփ ձևով: Կրոնին և աստվածաբանությանը վերաբերող այս էսսեն լի է պայքարով, հոգեվարքով, որտեղ ընթերցողը կարող է տեսնել սկեպտիկ, վիճարկող և հոգեվարքի մեջ ինքն իր հետ երկխոսության մեջ գտնվող Ունամունոյին: Մյուս կողմից, սակայն, Ունամունոյի այս էսսեն գալիս է հիշեցնելու, որ բասկ գրողը ոչ միայն փիլիսոփա է, այլև մեծ բանասեր, որովհետև վերջինս բառերին կենդանություն հաղորդելու, նոր շունչ պարգևելու իսկական վարպետ է: «Հոգեվարքը» Ունամունոյի համար թերևս ամենակենսունակ և կենդանի բառն է, որը ոչ մի կապ չունի մահվան հետ, ճիշտ հակառակը, «հոգեվարքը» պայքար է հանուն կյանքի և ընդդեմ մահվան. «ապրել հոգեվարքի մեջ» նշանակում է պայքարել կյանքի դեմ, նաև մահվան: Հետևաբար Ունամունոյի «Քրիստոնեության հոգեվարք»-ը հոգեվարքի մասին չէ, այլ պայքարի, որովհետև նրա համար մահը կյանք է, իսկ կյանքը՝ մահ: Ունամունոյի հոգին միաժամանակ լի է և՛ հույսով, և՛ հուսահատությամբ, ինչպես Սուրբ Թերեզայի հոգին. «Մեռնում եմ, որովհետև չեմ մեռնում»: Ահա Ունամունոն առաջ է քաշում հետևյալ հարցադրումը. «Եվ մի՞թե մահը նրա համար չէ, որ չմեռնես: Մի՞թե այդպես չի մեռնում մեր քաղաքակրթությունը, ու մի՞թե դրանում չէ Արևմուտքի ողբերգությունը»:

Քրիստոնեությունը խոսում է այն կյանքի մասին, որ մարդուն տրվում է մահից, մարմնի հարությունից հետո,

բայց ի՞նչ է նշանակում քրիստոնյա լինել: Հոգեվարքը պայքար է ապրելու համար՝ հիմնված կասկածի վրա՝ արդյո՞ք հավատը հենց այն է, ինչին մենք հավատում ենք, բայց չենք տեսնում, ինչում համոզված չենք, հոգեվարքը այդ պայքարն է, իսկ այդ պայքարը՝ կասկածը, որը հենց քրիստոնեության հոգեվարքն է: Ունամունոն այստեղ հանդես է գալիս որպես լուսավորական. մարդը կարիք ունի հավատալու, նույնիսկ առանց համոզմունքների, հենց այդ անհրաժեշտությունն է, որ նրա մեջ կասկած է ծնում»:

Ունամունոն կոչ է անում քրիստոնեությունը բնորոշել և սահմանել հոգեվարքով, պայքարով, որովհետև լինել քրիստոնյա նշանակում է Քրիստոս լինել, իսկ քրիստոնեությունը նախապատրաստություն է դեպի մահ, հարություն, հավերժական կյանք. այս հարությունը, այս մեռնել-չմեռնելը հենց հոգեվարքն է, որ կա, մարմնի հարությունն ընդդեմ հոգու անմահության:

Ունամունոն վերլուծության է ենթարկում այսպես կոչված սոցիալական քրիստոնեության գաղափարը, որն ամենևին կապ չունի ժողովրդավարական քրիստոնեության կամ սոցիալիզմի հետ, քանի որ քրիստոնեությունը՝ իբրև հավատ ու կրոն, անհատական է: «Մաքուր քրիստոնեությունը՝ ավետարանական քրիստոնեությունը, փորձում է հավիտենական կյանք գտնել պատմությունից դուրս», որովհետև պետք է հիշել, որ Քրիստոսի թագավորությունն այս երկրի վրա չէ, և ուրեմն՝ իսկական քրիստոնյան չպետք է ապրի այս աշխարհի համար: Գոյություն ունեն քրիստոնյաներ, որոնք նախընտրում են ապրել մենության մեջ, մյուսները վանական են դառնում, իսկ ոմանք էլ թողնում են եկեղեցին, որպեսզի երեխաներ ունենան. նրանց կյանքը նույնպես պայքար է: Իբրև ապացույց՝ Ունամունոն գրում է. առաջիններն

ինքնամփոփվում են, մեկուսանում այն աշխարհից, որն իրենցը չէ, երկրորդները հավիտենական հոգեվարքի մեջ են, իսկ ահա երրորդ դասի քրիստոնյաները փորձում են անմահություն գտնել իրենց երեխաների մեջ, չնայած որ շարունակում են ապրել հոգեվարքի մեջ: Ունամունոն մահն ընդունում է իբրև մի բան, որից հնարավոր չէ խուսափել, քանի որ այն մի օր այցելելու է յուրաքանչյուրին, և ուրեմն՝ անօգուտ է վախենալ նրանից: Գիտակցելով մահվան անխուսափելիությունը՝ յուրաքանչյուր ոք ծգտում է մինչև սեփական վերջն ըմբոստանալ դրա դեմ: «Կյանքը, այս կյանքը, որ ունենք և որը ճանաչում ենք, ոչ հետաքրքիր է, ոչ էլ կարող է ծառայել մեզ, եթե հավերժ չէ, եթե ես կամ, մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ: Պատկերացնել նշանակում է, որ ես պատկերացնում եմ. պարզ տրամաբանություն, սակայն երբ մտածում եմ, որ մահից հետո իմ գիտակցության մեջ անէանալու են այդ պատկերացումները, այսինքն՝ մահից հետո այլևս ոչինչ չի լինելու, հասկանում եմ, որ ոչինչ հավերժ չէ, հետևաբար ընդունում եմ, որ կյանքն իրական չէ»: Մյուս կողմից՝ դժոխքի մասին պատկերացումները ստիպում են ըմբոստանալ հավատի դեմ, քանզի երբ քրիստոնյան սկսում է հավատալ դժոխքի գոյությանը և վախենալ դրանից, նշանակում է՝ ճշմարիտ չէ նրա հավատը: Դժոխքը ոչնչացում է, զրոյացում, անսահման դատարկություն, որտեղ միայն տառապում են, որտեղ տառապանքի միջոցով ինքնամաքրվելու և մխիթարություն գտնելու հույս և սեր չկա. այդ է պատճառը, որ մահվան գաղափարն Ունամունոն ուղղակիորեն կապում է դժոխքի հետ: Մարդը տատանվում է գոյության և ոչնչի միջև, որոնց միջև ընթանում է ահեղ պայքար, որը կենդանի հոգեվարք է, այլ կերպ ասած՝ գոյությունից մինչև մահ ընկած ժամանակահատվածը, որը ոչ այլ ինչ է, եթե

ոչ կյանք: Ողբերգական է մարդու ճակատագիրը. ամբողջ կյանքի ընթացքում նա տառապում է ռացիոնալիզմի և իռացիոնալիզմի ընտրության միջև, ձգտում է ազատվել դրանից, որպեսզի խաղաղություն և մխիթարանք գտնի հավատի մեջ, սակայն հասկանում է, որ անհնար է ապրել առանց բանականության: Էսսեում Ունամունոն խոստովանում է, որ կրոնով, աստվածաբանությամբ և փիլիսոփայությամբ լի այս վեպը գրել է՝ աստվածայինի հանդեպ ծարավից. «Խորասուզվելով մի կողմից սկեպտիկ ռացիոնալիզմի, մյուս կողմից՝ հուսահատության մեջ՝ ներսումս հանկարծ անհագ ցանկություն առաջացավ փնտրելու Աստծուն կամ գոնե այն ուղին, որ տանում է դեպի Աստված»: Սակայն հարկ է նշել, որ Ունամունոյի փնտրած Աստվածն իր ստեղծածն էր, այն Աստվածը, որին հնարավոր չէ հասնել գիտակցությամբ, չնայած հաճախ ակնարկում է, որ միայն Աստված և Նրա հանդեպ հավատը կարող են գտնվել մարդու գիտակցությունից դուրս, քանի որ մնացած ամեն բան ճանաչելի և գիտակցելի է բացառապես գիտակցության մեջ և գիտակցության շնորհիվ:

Քրիստոնեությունը՝ իբրև բարձրագույն կրոն, հոգեվարք է ապրում յուրաքանչյուր քրիստոնյայի հոգում. այդ է պատճառը, որ մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է պայքարել հանուն իր հավատի: Ունամունոն մեջբերում է Գիրք Ծննդոցի աստվածաշնչյան լեգենդը, որտեղ ասվում է. «Մահն աշխարհ եկավ մեղքի հետ, երբ մեր նախահայրերը մեղք գործեցին՝ փորձելով նմանվել Աստվածներին, այսինքն՝ անմահանալ, ճանաչել չարն ու բարին: Իսկ հետո, ըստ այդ լեգենդի, առաջին մահը բռնի եղավ, երբ Կայենը սպանեց Աբելին. եղբայրասպանություն եղավ»: Այն հարցին, թե ինչ է հոգեվարքը, Ունամունոն պատասխանում է. «Հոգեվարք նշանակում է պայքար:

Հոգեվարք է ապրում նա, ով ապրում է պայքարի մեջ, ով պայքարում է հենց կյանքի դեմ, մահվան դեմ»,– այսպես է ասվում Սուրբ Թերեզային ուղղված աղոթքում. «Մեռնում եմ, որովհետև չեմ մեռնում...»:

«Քրիստոնեության հոգեվարքը» հեղինակի համար իմաստավորվում է իր հայրենիքից արտաքսված մարդու ներքին հոգեվարքով, որն Ունամունոն փորձում է պատկերել քրիստոնեական կրոնի գիտակցման հոգեվարքի ձևով: Իրականում սա նույնպես կոիվ է, պայքար այն մարդու ներսում, որն արտաքսվեց դրախտից, սակայն նրա մեջ հավերժ ապրում է նզովյալ պատժի ծանրությունը, մարդը փորձում է ըմբոստանալ այդ վտարման, արտաքսման դեմ, նա դիմում է Բանին (ի սկզբանե Բանն էր)՝ այդ կերպ փորձելով ապաշխարել, աղոթքի միջոցով կանչում է Աստծուն, սակայն դրախտի դռներն այլևս փակ են նրա առջև: Ահա սա է պատճառը, որ Ունամունոն «Քրիստոնեության հոգեվարքը» էսսեն ավարտում է հետևյալ նախադասությամբ. «Մեր Քրիստոս, մեր Քրիստոս, ինչո՞ւ լքեցիր մեզ»:

«Խրատական երեք նովել և մեկ նախաբան». լույս է տեսել XX դարի երկրորդ տասնամյակում՝ 1920 թ.: Խրատական նովելներին նախորդում է «Նախաբան»-ը, իսկ երեք նովելները վերնագրված են հետևյալ կերպ. «Երկու մայր», «Մարքիզ դե Լումբրիա», «Իսկական տղամարդը», որոնց ընդհանուր առանցքային թեման *ընտանիքն է և ընտանեկան հարաբերությունները՝* կին-ամուսին, ծնողներ-զավակներ, ազնվական ընտանիքներում ծնվող օրինական և ապօրինի ժառանգներ:

«Խրատական երեք նովել և մեկ նախաբան»-ում Ունամունոն նիվոլային պատումի միջոցով վերլուծում է

գրողի և իր ստեղծած հերոսների միջև կապը, բացահայտում հերոսների ապրումները՝ նրանց ներկայացնելով ռացիոնալ մտածողության սահմանից այն կողմ:

«Նախաբան»-ում հեղինակն ամփոփում է պատմվածքի և կերպարներ կերտելու, անձի ներաշխարհի ուսումնասիրության մասին իր հիմնական գաղափարները՝ կարևորելով նկարագրական էլեմենտների սակավությունը, անձի հոգեբանության ներքին զարգացումը, երկխոսությունների գերակայությունը:

Նախաբանն իր հերթին բաղկացած է յոթ մասից, որոնցում հեղինակը պատմում է նովելային կամ նիվոլային կերպարների ստեղծման կամ, ինչպես ինքը՝ Ունամունոն է նշում, կերպարներ արարելու կամ արարչագործելու մասին:

Նովելները կոչվում են «խրատական», ինչպես Սերվանտեսն իր ժամանակին «խրատական» կամ «օրինակելի» անվանեց 1590-1612 թթ. գրած իր նովելները: Ինչհույս խրատական, որովհետև դրանցից յուրաքանչյուրը կյանքի և իրականության մի պատկեր է՝ որևէ ընտանիքի օրինակ, որ կարող է խրատ դառնալ և օրինակ ծառայել մյուսների համար:

Ունամունոյի էքզիստենցիալիստական փիլիսոփայությունը չէր կարող անմասն մնալ այս նովելներում, հատկապես, երբ նա գրում է «ցանկանալ լինելու» և «ցանկանալ չլինելու» մասին, որով, փաստորեն, կասկածի տակ է դնում նովելների կերպարների, գաղափարների իրական լինելը, ինչպես նաև դրանց էությունը:

Զարգացնելով Էրիխ Ֆրոմի առաջադրած «լինել-չլինելու» գաղափարը՝ Ունամունոն կրկին գրում է. «Որովհետև այժմ շատերը կան, որ «ցանկանում են լինել», և նրանք, ովքեր «ցանկանում են չլինել»: Նույն ձևով կան «մսից և արյունից ստեղծված նիվոլային կերպարներ» և

«նիվոլային կերպարներ, որ միս և արյուն են ստանում», որը, սակայն, նույն բանը չէ»:

Փաստորեն, իսպանական գրականության պատմության մեջ «խրատական նովելներին» անդրադարձել է երեք գրող՝ Խուան Մանուելը՝ «Կոմս Լուկանոր» խրատանիով՝ 1330-1335 թթ., Միգել դե Սերվանտես Սավեդրա՝ «խրատական նովելներ»՝ 1590-1612 թթ., և Միգել դե Ունամունո՝ «խրատական երեք նովել և մեկ նախաբան»՝ 1920թ.:

ԴԻԻԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ
ՀՈԳԵՎԱՐՔԸ**

Հեղինակի կողմից

Այս գիրքը գրվել է 1924 թվականի վերջին, երբ ինձ արտաքսեցին, ու ես ապաստան գտա Փարիզում՝ «հռոմեական կայսրերի» և «իսպանացի Կեսարների» լիակատար բռնապետության ներքո, աննկարագրելի մի հոգեվիճակում՝ համակված իսկական հոգևոր տենդով և սպասումի մղձավանջով. իրավիճակ, որի մասին փորձել եմ պատմել իմ «Ինչպես է ստեղծվում վեպը» գրքում: Այս գիրքը գրվել է պատվերով, ինչպես որ ներկայացնում եմ Նախաբանում:

Ես գրեցի այս գիրքը, որպեսզի այն թարգմանվի ֆրանսերեն (նկատի ունեմ նաև այս թարգմանությունը), գրեցի ամբողջ աշխարհի, ավելի ճիշտ՝ ֆրանսիական հասարակության համար. ահա թե ինչու խմբագրելիս չեմ ջանացել խուսափել իսպանալեզու հասարակությանը խորթ հասկացություններից և լեզվական ճաշակից: Ավելին՝ մտքովս անգամ չէր անցնի, թե այն երբևէ լույս կտեսնի իսպաներենով, այսինքն՝ այն, ինչ ունենք այսօր: Լրացումներով «ծանրաբեռնված» ձեռագրերս հանձնեցի ֆրանսիացի, բայց և նույնքան իսպանացի թարգմանիչ և իմ պաշտելի ընկեր Կուշուին, ով իսպանական «համ ու հոտ» հաղորդեց ֆրանսերեն տեքստին, որով էլ նպաստեց գրքի հաջողությանը, քանզի իր տեքստում կարողացել էր պահպանել «նյարդը», որով գրել էի: Այնուհետև այս փոքրիկ ստեղծագործությունը թարգմանվեց գերմաներեն, իտալերեն և անգլերեն: Իսկ այժմ հերթն այն լեզվինն է, որով ի սկզբանե «կառուցել» եմ:

Կառուցել: Որևէ մեկը կարող է ասել, որ այս ստեղծագործությունն իրապես զուրկ է վերը նշված կառուցվածքից. ճարտարապետական կառուցվածքից՝ գուցե և այո՛, բայց ոչ կենդանի կառուցվածքից: Ես գրեցի այս գիրքը, ինչպես՝ ասացի, գրեթե կիզիչ տենդի մեջ, ելնելով այն մտորումներից և զգացմունքներից, որ տարիներ ի վեր (այնքա՛ն երկար) խմորվում էին հոգուս մեջ, որ փոթորկում էին ներսս հայրենիքիս հասած պատուհասների պատճառով, ու նաև նրանցից, որ պատահաբար հասան ինձ՝ այն ամենից, ինչ ընթերցում էի այդ ժամանակ: Այն ամենը, ինչ կկարդաք քիչ հետո, համապատասխանում է այն ժամանակվա, ներկայիս և գրելուս ընթացքում պատկերվող Ֆրանսիային: Նույնիսկ չեմ էլ ցանկացել բացառել այն ակնարկները, որոնք այսօր ժամանակավրեպ և գրեթե անհասկանալի են համարվում Ֆրանսիայի սահմաններից դուրս:

Փոքրիկ այս ստեղծագործությունը ներկայացվում է ավելի կոնկրետ և անսպասելի, ավելի թանձր և սաստիկ տենդով, քան այն ամենը, ինչ ներկայացրել եմ «Մարդկանց և ժողովուրդների՝ կյանքի հանդեպ ողբերգական զգացումը» վեպում: Ավելին՝ դեռ շարունակելու եմ դեգերել դրանցում, ինչպես Սուրբ Լորենտոն, որ շարունակ խորովվում էր նահատակության իր օջախի վրա:

Մոնոլոգ: Այդպես են անվանում իմ... Այդ մոնոլոգները ինքս կանվանեմ քննադատական, իսկ իմ բոլոր ստեղծագործությունները զուտ մոնոլոգ են: Գուցե ճիշտ կլիներ դրանք անվանել «մոնոդիալոգներ» կամ, ավելի ճիշտ, «ինքնադիալոգներ» կամ «դիալոգներ ինքդ քեզ հետ»: «Ինքնադիալոգը» մոնոլոգ չէ: Նա, ով երկխոսում է, նա, ով խոսում է ինքն իր հետ՝

կիսվելով երկու կամ երեք, ավելին՝ չորս կամ ամբողջ ժողովրդի միջև, չի մենախոսում: Այդ վարդապետներն են, որ կատեխիզիստների նման մենախոսում են, մինչևիսկ այն դեպքում, երբ թվում է, թե երկխոսում են՝ իրար հարց ու պատասխան տալով: Սկեպտիկները, հոգեվարքողներն ու պայքարողները նույնպես չեն մենախոսում: Իմ ներսում՝ հոգուս ամենախորքում, ապրում են հոգեվարքը, պայքարը, հոգևոր և քաղաքացիական պայքարը, ապրում են, որպեսզի ինքս կարողանամ ապրել մենախոսություններով: Հորը հակասությունների մարդ էր, այդպիսին էին նաև Պողոսը, Ավգուստինոսը, Պասկալը, կարծում եմ՝ նաև ես:

Այս գիրքը 1930 թվականի փետրվարին ֆրանսերենով գրելուց և հրատարակելուց հետո կարծում էի, թե արդեն կարող եմ վերադառնալ Իսպանիա, և վերադարձա: Եվ վերադարձա, որպեսզի վերաբնակվեմ այնտեղ՝ հայրենիքի գրկում, քաղաքացիական կամ եթե կուզեք, քաղաքական շարժումներին միավորվելու համար: Ու քանի դեռ հարում էի դրանց շարքերը, զգում էի, թե ինչպես էին ներսումս վեր ելնում իմ հին, ավելի ճիշտ՝ կրոնական մշտական մտատանջությունները, իսկ քաղաքական մտորումներիս կիզակետում մի ձայն շշնջում էր ականջիս. «Ու հիմա ի՞նչ, ինչի՞ համար, ինչի՞»: Այդ ձայնը լռեցնելու համար առաջընթացի, քաղաքացիական պարտքի և արդարության ճանապարհին շարունակ հավատ էի դավանում հավատացյալներին, որպեսզի ինքս ինձ համոզեի դրանց գերազանցության մեջ:

Այլևս չեմ ուզում շարունակել այս ճանապարհը, բայց ոչ այն պատճառով, որ ինձ հոռետես կանվանեն. մի բան, որ ամենևին չի էլ հուզում ինձ: Ես գիտեմ

այն ամենը, ինչ ստեղծվել է ոգու աշխարհում, նաև այն, թե պարզունակ միջակներն ինչն են հոռետեսություն անվանում, նաև կրոնի և քաղաքականության մասին, նաև այն, որ պայքարի համար դրանք պիտի մխիթարություն փնտրեն հենց պայքարի մեջ, նույնիսկ երբ հույս չկա, երբեմն էլ մինչևիսկ ընդդեմ հաղթանակի հույսի:

Եվ չեմ ուզում ավարտել այս նախաբանը՝ առանց նշելու, որ այս գրքի ամենագովելի հաջողությունը բացատրվում է նրանով, որ ինձ հաջողվել է սահմանել «հոգեվարք» բառի ճշմարիտ, սկզբնական և ստուգաբանական իմաստը, այն, որ հոգեվարքը պայքար է: Դրա շնորհիվ այլևս անհնար կլինի հոգեվարքողին շփոթել մեռնողի կամ հանգուցյալի հետ: Կարելի է մեռնել առանց հոգեվարքի և կարելի է երկար տարիներ ապրել հոգեվարքի, մեջ և հոգեվարքից կառչած: Իսկական հոգեվարքի մեջ ապրողը հոգեվարքողն է, որը շատ դեպքերում հենց գլխավոր հերոսն է, իսկ երբեմն էլ՝ հակահերոսը:

Իսկ հիմա, իսպանալեզու ընթերցող, ցտեսություն, մինչ հանդիպում «ինքնադիպլոգում», դու քո հոգեվարքի մեջ, ես՝ իմ, և թող Աստված օրհնի մեզ:

Սալամանկա, 1930 թ., հոկտեմբեր

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈ

Նախաբան

«Մեռնում եմ, որովհետև չեմ մեռնում»

Սուրբ Թերեզա դե Խեսուս

Քրիստոնեությունը համամարդկային հոգևոր արժեք է, որի արմատները գտնվում են մարդկային անհատականության ամենախորքում: Հիսուսականներն ասում են, որ վերջինիս հետ է կապվում մեր՝ սեփական, անհատական և անձնական փրկության խնդրի լուծումը, և չնայած, որ դա հիմնականում հիսուսականներն են ասում՝ այն համարելով թե՛ տնտեսական, թե՛ աստվածային խնդիր, այնուամենայնիվ, այստեղ մենք այն պետք է դիտարկենք որպես կանխադրույթ:

Ընթերցող, հաշվի առնելով խնդրի խիստ անհատական և ըստ այդմ էլ համամարդկային լինելու հանգամանքը՝ ես ինձ պարտավորված եմ զգում հակիրճ ձևով ներկայացնել խիստ անձնական և անհատական բնույթի այն հանգամանքները, որոնք գրել և առաջարկել եմ այս ստեղծագործության մեջ:

Իմ խեղճ հայրենիքի՝ Իսպանիայի զինվորական բռնապետությունն ինձ արտաքսեց Ֆուերտեվենտուրա կղզի, որտեղ կարողացա խորապես հարստացնել իմ կրոնական և մինչևհիսկ միստիկ փորձառությունը: Այդ կղզուց ինձ դուրս բերեց Ֆրանսիական մի առագաստանավ, որն էլ Ֆրանսիայի ափ հասցրեց ինձ. այդպիսով ես հաստատվեցի այստեղ՝ Փարիզում՝

«Հաղթանակի կամար»¹-ի մոտ գտնվող մի մենախցում, որտեղ գրում են այս ստեղծագործությունը: Այստեղ պատմությանը, սոցիալական և քաղաքացիական կյանքով ամբողջովին հագեցած Փարիզում, համարյա անհնար կլիներ որևիցե անկյուն գտնել թաքնվելու համար այն պատմությունից, որ ավելի ուշ ստիպված էի լինելու վերապրել: Այստեղ՝ Փարիզում, չեմ կարող նայել ո՛չ Սալամանկայի՝ համարյա ամբողջ տարի ձյունով ծածկված լեռնաշղթային, որը սնում էր հոգիս, ո՛չ հոգուս հանգստություն բերող Պալենսիայի բուսականությունից զուրկ այն տափաստանին, որտեղ գտնվում է ավագ որդուս օջախը, ոչ էլ այն ծովին, որի վրա ամեն օր տեսնում էի, թե ինչպես էր ծագում Ֆուերտեվենտուրայի արևը: Այդ նույն գետը՝ Սենան, իմ ծննդավայր Բիլբաոյի² Ներվիոն գետը չէ, որտեղ կարող ես զգալ ծովի զարկերակը, մակընթացություններն ու տեղատվությունները: Փարիզի այս մենախցում փակված՝ միայն ընթերցանությունն էր, որ ջերմացնում էր հոգիս. կարդում էի՝ ինչ պատահաբար ձեռքս ընկներ. հենց այդ պատահականությունն է, որ ընկած է ազատության հիմքում:

Հենց այդպիսի՝ կհամարձակվեմ ասել կրոնական և քրիստոնեական բնույթի անհատական հանգամանքներում ինձ մոտեցավ պարոն Պ. Լ. Կուշուն³ և խնդրեց մի բրոշյուր գրել իր՝ «Քրիստոնեություն» վերնագրով ժողովածուի համար: Հենց նա էլ ինձ առաջարկեց այս

¹ Հաղթանակի կամար – Փարիզի ամենահայտնի հուշարձաններից մեկը: Այն գտնվում է Շառլ դը Գոլի թաղամասում, կառուցվել է ի պատիվ Հեղափոխության և Նապոլեոնական պատերազմներում տարած հաղթանակների:

² Բիլբաո – քաղաք հյուսիս-արևմտյան Իսպանիայում՝ Բասկերի երկիր:

³ Պոլ Լուիս Կուշուն – ֆրանսիացի փիլիսոփա, ֆիզիկոս, պոետ և թարգմանիչ: